ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀՐԱՄԱՆ

«17» 12 2021թ No 06-Լ

«ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՄ ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 909-Լ որոշման հավելվածի 2.2.7-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրի 1-ին հավելվածի 8-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 3-ի N 1786-Ա հրամանի հավելվածի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) ներդնել Տեսչական մարմնի տեսուչների համար մշակված «Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները Հայաստանի Հանրապետությունում» ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում գործառույթներ իրականացնող տեսուչների մասնագիտական գիտելիքները կատարելագործելու նպատակով վերապատրաստման գործընթացում կիրառել սույն հրամանի 1-ին կետով ներդրված ուղեցույցը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Գոհար Դարբինյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

X

ԳՈՀԱՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Signed by: DARBINYAN GOHAR 5705820186 ԳՈՀԱՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի ղեկավարի
« 17 » դեկտեմբերի 2021թ. N 06-Լ հրամանի

Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները Հայաստանի Հանրապետությունում

Ուղեցույց Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տեսուչների համար

Երևան 2021

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցի շրջանակներում, հիմք ընդունելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) փաստաթղթերը, **պարտադիր կամ հարկադիր աշխատանքի**[1] գործառնական սահմանումն է՝ ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը (*կամավորության բացակայության սկզբունքը*) և որը կատարվում է գործատուի կամ երրորդ անձի կողմից կիրառվող պատժի սպառնալիքի[1] տակ (*հարկադրանքի սկզբունքը*):

ԱՄԿ-ն ներկայացրել է նաև պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչները[2] ՝ բաժանելով դրանք ուժեղ, միջին և թույլ ցուցիչների, սույն ուղեցույցը հիմնվելու է ԱՄԿ-ի մշակած ցուցիչների վրա, որոնք խմբագրվել, վերադասակարգվել, լրամշակվել և տեղայնացվել են ներպետական օրենսդրությանը համահունչ:

Հարկադիր աշխատանքի գործառնական սահմանումը կարելի է բաժանել չորս հիմնական չափորոշիչների՝

1. Հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրում (հարկադրանքի չափորոշիչ),
2. Ճնշման տակ աշխատանք կատարելը կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելը,
3. Օրինական ձևով աշխատանքից հրաժարվելու անհնարինությունը,
4. Տուգանքի կամ պատժի սպառնալիք (հարկադրանքի միջոցներ):

«Հարկանդրանքի» չափորոշիչն իր հերթին բաժանվում է վեց ենթախմբերի՝

ա) սպառնալիք կամ բռնություն (ֆիզիկական, սեռական, հոգեբանական և այլն),

բ) աշխատողի ազատ տեղաշարժի սահմանափակում՝ մեկուսացման, ազատությունից զրկման կամ վերահսկողության պատճառով,

գ) պարտքային կախվածություն կամ պարտքի առնչությամբ այլ գործողությունների, ներառյալ՝ սպառնալիքներ աշխատողի կամ նրա ընտանիքի անդամների նկատմամբ,

դ) պահումներ աշխատավարձից կամ այլ խոստացած վճարներից՝ աշխատողին նախատեսված ժամանակից ավելի երկար պահելու նպատակով,

ե) անձնագրի, ճամփորդական կամ այլ փաստաթղթերի առգրավում,

զ) խոցելիության օգտագործում, ինչը կարող է ներառել անձի՝ անօրինական կարգավիճակով երկրում գտնվելու մասին իշխանություններին հայտնելու սպառնալիքը, իրավախախտումների մասին իրավապահ մարմիններին հայտնելը և այլն:

Ելնելով ԱՄԿ թիվ 29 Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիայից, ձևավորել է ցուցիչների երկու խումբ՝

1) **կամավորության բացակայության սկզբունքը գնահատելու և**

---

[1] Սպառնալիքը տարբերվում է նախազգուշացումից հետևյալ երկու հատկանիշներով՝ իրավաչափություն (օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված լինելը) և նպատակ (հետապնդվող նպատակներն իրավաչափ կամ հանրօգուտ են, թե՝ ոչ):

[2] "Hard to see, harder to count", Survey guidelines to estimate forced labour of adults and children, International Labour Office (ILO), 2012.

2) **տուգանքի կամ պատժի սպառնալիքը գնահատելու նպատակով**:

Ամեն մի ցուցիչ կարող է գնահատվել «1», եթե առկա է համապատասխան չափորոշիչը և «0»՝ դրա բացակայության դեպքում:

Կամավորության բացակայության ցուցիչները խմբավորված են երեք չափորոշիչների՝

1) հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրում,

2) ճնշման տակ աշխատանք կատարելը կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելն ու

3) աշխատանքից ազատվելու (գործատուին փոխելու) անհնարինություն (մանրամասն տես Գծապատկեր 1):

Իսկ հարկադրանքը կարող է կիրառվել թվարկված բոլոր երեք չափորոշիչների ընթացքում: Այսպիսով, «կամավորության բացակայության» և «հարկադրանքի» համակցությունը կարող է օգտագործվել, որպեսզի տվյալ իրավիճակը որակվի որպես *ենթադրյալ* հարկադիր աշխատանք:

Գծապատկեր 1. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի ցուցիչներն ու չափորոշիչները



ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Հարկադիր աշխատանքի ցուցիչները նախևառաջ ներկայացվում է առանձնացված չափահասների և անչափահասների համար նախատեսված ցուցիչների: Երկու ցուցիչներն էլ տարանջատված են ոչ թե երեք տեսակի՝ ուժեղ, միջին կամ թույլ, այլ բաժանվում են երկու տեսակների՝ ուժեղ և միջին, քանի որ թույլ ցուցիչների մի մասը ՀՀ օրենսդրության համաձայն տրամաբանական է ներկայացնել որպես միջին, իսկ մյուս մասը՝ վերաբերելի չէ աշխատանքային հարաբերություններին կամ չի կարող ունենալ ազդեցություն արարքի իրավական գնահատականի համար:

Հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրման ցուցիչները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրման ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**
Ուժեղ ցուցիչներ	***Ուժեղ ցուցիչներ***
Ավանդույթ, ի ծնե «ստրկություն»	Իշխանություններին տեղեկացում, օրինակ՝ անօրինական ճանապարհով սահման հատելու կամ միգրացիոն այլ իրավախախտում կատարելու մասին
Հարկադրաբար հավաքագրումը (առևանգում, մեկուսացում և այլն)	Անձի նույնացման, ճամփորդական կամ այլ փաստաթղթերի առգրավում
Աշխատողի առուվաճառք	Ֆիզիկական կամ սեռական բռնություն
Աշխատանքի բնույթի վերաբերյալ խաբեություն	Սպառնալիքներ, ներառյալ՝ ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ
Պարտքի դիմաց հավաքագրում	Իրավունքներից կամ արտոնություններից զրկում
	Ակտիվների (կանխիկ գումարի կամ այլ միջոցների) պահում
Միջին ցուցիչներ	***Միջին ցուցիչներ***
Խաբեությամբ հավաքագրում (աշխատանքային պայմանների, պայմանագրի բովանդակության, իրավական փաստաթղթերի կամ միգրանտի իրավական կարգավիճակի,	Հետագայում տվյալ աշխատողի հետ աշխատանքը չշարունակելու կամ ներկա աշխատանքից ազատելու սպառնալիք

աշխատանքի վայրի կամ գործատուի, աշխատավարձի վերաբերյալ)	
Խաբեությամբ հավաքագրում՝ ամուսնության խոստումով	Համայնքային և հասարակական կյանքին մասնակցության արգելում
	Օրենքով չսահմանված ֆինանսական տույժեր
	Ընտանիքին, համայնքին կամ հանրությանն աշխատողի կարգավիճակի վերաբերյալ տեղեկացնելու սպառնալիք (շանտաժ)

Ճնշման տակ աշխատանք կատարելու կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելու ցուցիչները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ճնշման տակ աշխատանք կատարելու կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելու ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**
Ուժեղ ցուցիչներ	***Ուժեղ ցուցիչներ***
Օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողությունը գերազանցող հարկադրված արտաժամյա աշխատանք	Իշխանություններին տեղեկացում, օրինակ՝ անօրինական ճանապարհով սահման հատելու կամ միգրացիոն այլ իրավախախտում կատարելու մասին
Չկարգավորված աշխատաժամանակով, ըստ կանչի հարկադրված աշխատանք (գիշեր, ցերեկ)	Անձի նույնացման, ճամփորդական կամ այլ փաստաթղթերի առգրավում
Ազատ տեղաշարժի և հաղորդակցման սահմանափակում	Բջջային հեռախոսի կամ այլ հաղորդակցման միջոցների առգրավում
Աշխատանք նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններ	Աշխատանքային պայմանների վատթարացում կամ դրա սպառնալիք
Անվտանգության պայմանների բացակության դեպքում հարկադրված աշխատանք	Մեկուսացում, ազատության զրկում, վերահսկողություն (թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական)
	Այլ զրկանքներ (քնից, ջրից, սննդից և այլ անհրաժեշտ կենսական պայմաններից զրկում)
	Այլ աշխատողների առջև աշխատողի նկատմամբ բռնություն գործադրում
	Իրավունքներից կամ արտոնություններից զրկում

	Մշտական վերահսկում
	Ակտիվների (կանխիկ գումարի կամ այլ միջոցների) պահում
	Աշխատավարձից անհիմն պահումներ
	Սպառնալիքներ, ներառյալ՝ ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ
Միջին ցուցիչներ	***Միջին ցուցիչներ***
Հակաիրավական գործունեության մեջ հարկադրաբար ներառում	Աշխատանքից անհիմն ազատում
Գործատուի կամ նրա ընտանիքի համար տան պայմաններում հարկադրված աշխատանք	Հետագայում տվյալ աշխատողի հետ աշխատանքը չշարունակելու կամ ներկա աշխատանքից ազատելու սպառնալիք
Շրջանառության մեջ սահմանափակված նյութերի, օրինակ՝ թմրամիջոցների, գործածմանը հարկադիր հակում	Համայնքային և հասարակական կյանքին մասնակցության արգելում
Դրդված կամ ուռճացված պարտք (հաշիվների կեղծմամբ, գնված ապրանքների/ ծառայությունների ուռճացված գների միջոցով, արտադրված ապրանքների/մատուցված ծառայությունների գների նվազեցմամբ, չափից ավել տոկոսադրույքով վարկի միջոցով և այլն)	Լրացուցիչ աշխատանքներ՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար
Գործատուից բազմակի կախվածություն (բարեկամների համար աշխատանք, տնային աշխատանք և այլն)	Ֆինանսական անհիմն կամ կամայական տույժեր
Գործատուից վաղորոք առաջացած կախյալ վիճակի առկայություն կամ դրա օգտագործում	Ընտանիքին, համայնքին կամ հանրությանն աշխատողի կարգավիճակի վերաբերյալ տեղեկացնելու սպառնալիք (շանտաժ)

Աշխատանքից ազատվելու (գործատուին փոխելու) անհնարինության ցուցիչներ ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Աշխատանքից ազատվելու (գործատուին փոխելու) անհնարինության ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**

Ուժեղ ցուցիչներ	*Ուժեղ ցուցիչներ*
Օրինական ձևով աշխատանքից ազատվելու (հրաժարվելու) անհնարինություն	Իշխանություններին տեղեկացում, օրինակ՝ անօրինական ճանապարհով սահման հատելու կամ միգրացիոն այլ իրավախախտում կատարելու մասին
	Անձի նույնացման, ճամփորդական կամ այլ փաստաթղթերի առգրավում
Անորոշ ժամանակով հարկադրված աշխատանք՝ նախապես վճարված աշխատավարձի (աշխատավարձի կանխավճարի) կամ չմարված պարտքի դիմաց	Աշխատանքային պայմանների վատթարացում կամ դրա սպառնալիք
	Աշխատավայրում կամ բնակարանում անազատ վիճակ
	Ֆիզիկական կամ սեռական բռնություն
	Այլ զրկանքներ (քնից, ջրից, սննդից և այլ անհրաժեշտ կենսական պայմաններից զրկում)
	Իրավունքներից և արտոնություններից զրկում
	Մշտական վերահսկողություն
	Աշխատողների առջև այլ աշխատողների նկատմամբ բռնություն գործադրում
	Ակտիվների (կանխիկ գումարի կամ այլ միջոցների) պահում
	Աշխատավարձից անհիմն պահումներ
	Սպառնալիքներ, ներառյալ՝ ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ
Միջին ցուցիչներ	*Միջին ցուցիչներ*
Գործատուի կողմից վճարված վերապատրաստումից կամ այլ արտոնություններ/օգուտներ ստանալուց հետո աշխատանքային պայմանագրի լուծարման ազատության սահմանափակում	Աշխատանքից հեռացում (ազատում)
Հասանելիք աշխատավարձի ակնկալիքով պայմանվորվածից ավելի երկար ժամանակով աշխատավայրում մնալու հարկադրում	Տվյալ աշխատողին հետագայում աշխատանքի չընդունում
	Համայնքային և հասարակական կյանքին մասնակցելու արգելք

	Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար լրացուցիչ աշխատանքների կատարման պարտավորեցում
	Ֆինանսական անհիմն կամ կամայական տույժեր
	Ընտանիքին, համայնքին կամ հանրությանն աշխատողի կարգավիճակի վերաբերյալ տեղեկացնելու սպառնալիք (շանտաժ)

Հարկադիր աշխատանքի նույնացումը չափահաս անձանց դեպքում իրականացվում է, հաշվի առնելով հետևյալը՝ ամեն մի չափորոշիչի համար, եթե առկա է *կամավորության բացակայության* առնվազն մեկ ցուցիչ <u>և</u> դրան առնչվող *փուգանքի կամ պատժի սպառնալիքի* մեկ ցուցիչ <u>և</u> այդ ցուցիչներից առնվազն մեկն ուժեղ է, ապա չափորոշիչը դրական է: Ցանկացած չափահաս աշխատող, ում պարագայում չափորոշիչներից որևէ մեկը՝ «*հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրման*» <u>կամ</u> «*ճնշման տակ աշխատանք կատարելը կամ նվաստացնող (սպորացուցիչ) կենսապայմաններում ապրելը*» <u>կամ</u> «*աշխատանքից ազատվելու (գործատուին փոխելու) անհնարինությունը*» դրական է, կարող է դիտվել որպես <u>ենթադրյալ հարկադիր աշխատանքի զոհ</u>:

ՀԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ առանձնացված է երեխաների թրաֆիքինգը կամ շահագործումը, տրամաբանական է, որ նրանց աշխատանքը նույնպես ունի որոշակի առանձնահատկություններ թե՛ ազգային, թե՛ միջազգային օրենսդրության համատեքստում:

2005թ.-ի դեկտեմբերի 29-ի N2308-Ն որոշմամբ հաստատվել է մինչև 18 տարեկան անձանց, հղի կանանց և մինչև 1 տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը: Այդ ցանկը չի ենթարկվել որևէ փոփոխության և դրա կիրառելիությունը վիճահարույց է: Իդեալական տարբերակ կլիներ, որ մինչև 18 տարեկան անձանց համար ծանր կամ վնասակար համարվող աշխատանքին զուգահեռ նշվեր նաև արգելված աշխատանքը և նրա ցուցիչներն ու դա հաստատվեր ՀՀ կառավարության որոշմամբ, սակայն այս տարբերակով ներկայացվող ցուցիչները կարող են կիրառվեն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տեսուչների կողմից, որից հետո ենթարկվեն որոշակի լրամշակման և խմբագրման՝ ՀՀ կառավարության վերը նշված որոշման մեջ ներառվելու նպատակով:

Երեխայի հարկադիր աշխատանքն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել ԱՄԿ «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման մասին» թիվ 182 կոնվենցիան, որը պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր

անձանց հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար: Այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է՝

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Այս սահմանումները հանդիսանում են ելակետային երեխաների հարկադիր աշխատանքի առանձնահատկությունները ներկայացնելու համար՝ հաշվի առնելով ԱՄԿ կոնվենցիաների և ՀՀ ազգային օրենսդրության պահանջները:

Երեխաների հարկադրաբար և խաբեությամբ (ոչ ազատ կամաարտահայտմամբ) հավաքագրման ցուցիչները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հարկադրաբար կամ խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրման ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**
Ավանդույթ, երեխան ծնվել է պարտք ունեցող ընտանիքում և հարկադրված է աշխատել իր ծնողի/ծնողների գործատուի համար	Ընտանիքի կողմից իր օգուտները, գույքը կամ շահույթը (հողատարածք, տուն և այլն) կորցնելու սպառնալիք
Պարտքային այլ կախվածություն	Ընտանիքի անդամների կողմից աշխատանքը կորցնելու վտանգ
Հավաքագրում, որպես գործատուի հետ համաձայնության մի մաս՝ ծնողներին կամ մերձավորներին աշխատանքի ընդունելու	Աշխատանքը ներկայումս կատարելուց հրաժարվելու դեպքում՝ երեխային հետագայում աշխատանքի չընդունելու սպառնալիք
Հավաքագրում, որպես ծնողներին կամ բարեկամներին տրամադրած վարկի գրավ	Ընտանիքի անդամներին ապագա աշխատանքից ազատում
Հավաքագրում՝ ծնողներին վճարված կանխիկ գումարի կամ վարկի դիմաց	Բռնություն երեխայի կամ ընտանիքի անդամների նկատմամբ

Առանց ծնողի համաձայնության նախորդ գործատուի կողմից երեխային մեկ այլ անձի մոտ աշխատելու ուղարկելը	Երեխայի կամ ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ
Երեխայի առևանգում, հավաքագրում բռնություն կամ սպառնալիք կիրառելով	Ընտանիքի անդամներին վարկ ստանալու (տրամադրելու) բացառում
Հարկադիր հավաքագրում	Երեխայի մեկուսացում
Խաբեությամբ հավաքագրում	
Մոլորեցում կրթություն ստանալու, կենսապայմանների, ծնողներին այցելելու կամ նրանց կողմից երեխային այցելելու հաճախականության, աշխատանքի բնույթի կամ վայրի, գործատուի, աշխատավարձի, աշխատանքի ծավալի և սոցիալական ապահովության շրջանակների վերաբերյալ	

Երեխայի՝ ճնշման տակ աշխատանք կատարելու կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելու ցուցիչները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Ճնշման տակ աշխատանք կատարելու կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելու ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**
Հարկադիր աշխատանք	Ֆիզիկական կամ սեռական բռնություն
Օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողությունը գերազանցող հարկադրված արտաժամյա աշխատանք	
Չկարգավորված աշխատաժամանակով, ըստ կանչի հարկադրված աշխատանք (գիշեր, ցերեկ)	Հոգեբանական բռնություն
Գործատուի կամ նրա ընտանիքի համար տան պայմաններում հարկադրված աշխատանք	Այլ զրկանքներ (քնից, ջրից, սննդից և այլ անհրաժեշտ կենսական պայմաններից զրկում)
Հիվանդ կամ վնասվածքներով հարկադրված աշխատանք	Աշխատանքից ազատելու (հեռացնելու) սպառնալիք
Երեխայի առողջությանը կամ անվտանգությանը վնասող աշխատանքների կատարում	Ֆինանսական տույժեր
Հարկադրաբար թմրամիջոցներ, ալկոհոլ և այլ արգելված նյութերի ընդունում	Աշխատավարձից անհիմն պահումներ

Երեխայի անձնական կյանքին վերաբերող հարցերի շուրջ (ամուսնության, կրթության, առողջության, հավատքի և այլն) գործատուի կողմից որոշումների կայացում	Իշխանություններին տեղեկացում, օրինակ՝ անօրինական ճանապարհով սահման հատելու կամ միգրացիոն այլ իրավախախտում կատարելու մասին
Աշխատավայրից դուրս ազատ տեղաշարժի սահմանափակում	Ընտանիքի անդամների նկատմամբ սպառնալիքներ
Ազատությունների սահմանափակում կամ բնակելի կացարանը լքելու անհնարինություն	Այլ երեխաների նկատմամբ կիրառված բռնություն երեխայի ներկայությամբ
Այլ երեխաների կամ մեծահասակների հետ հաղորդակցվելու սահմանափակում	Սենյակում փակի տակ պահում
Ծնողների, ընտանիքի, ընկերների հետ հաղորդակցվելու սահմանափակում	Մշտական հսկողություն
Կախվածություն գործատուից	Մեկուսացում
Հակահիրավական գործունեության մեջ հարկադրաբար ներգրավում	Ծնողների և ընտանիքի անդամների հետ հաղորդակցվելու արգելք
Աշխատավարձի փոխարեն գործատուի կողմից սննդի, հագուստի և բնակելի կացարանի տրամադրում	Նույնացման կամ այլ կարևոր փաստաթղթերի առգրավում
Երեխայի նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելը	

Երեխաների՝ գործատուին փոխելու անհնարինության ցուցիչներ ցուցիչները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Աշխատանքից ազատվելու (գործատուին փոխելու) անհնարինության ցուցիչներ	
Կամավորության բացակայության սկզբունքի ցուցիչներ	**Տուգանքի կամ պատժի սպառնալիքի ցուցիչներ**
Գործատուին փոխելու/աշխատանքից ազատվելու ազատության սահմանափակում կամ անհնարինություն	Մեկուսացում
	Մշտական վերահսկողություն
	Ընտանիքի միակ եկամուտը/ գույքը (հողատարածքը, տունը և այլն) կորցնելու սպառնալիք
	Ընտանիքի այլ անդամների աշխատանքը կորցնելու սպառնալիք

	Աշխատանքը ներկայումս կատարելուց հրաժարվելու դեպքում՝ երեխային հետագայում աշխատանքի չընդունելու սպառնալիք
	Ընտանիքի անդամներին ապագա աշխատանքից զրկում
	Սպառնալիք կամ բռնություն երեխայի կամ ընտանիքի անդամների նկատմամբ
	Ընտանիքի անդամներին վարկ ստանալու(տրամադրելու) զրկում
	Այլ զրկանքներ (քնից, ջրից, սննդից և այլ անհրաժեշտ կենսական պայմաններից զրկում)
	Աշխատավարձից անհիմն պահումներ
	Կրթության, մասնագիտական վերապատրաստման չիրականացված խոստումներ
	Իշխանություններին տեղեկացում, օրինակ՝ անօրինական ճանապարհով սահման հատելու կամ միգրացիոն այլ իրավախախտում կատարելու մասին
	Նույնացման կամ այլ կարևոր փաստաթղթերի առգրավում
	Այլ երեխաների նկատմամբ կիրառված բռնություն երեխայի ներկայությամբ
	Աշխատանքային պայմանների հետագա վատթարացման սպառնալիք

Հարկադիր աշխատանքի նույնացումը երեխայի դեպքում իրականացվում է, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները. **ամեն մի չափորոշիչի համար, եթե առկա է *կամավորության բացակայության* առնվազն մեկ ցուցիչ և դրան առնչվող *փուգանքի կամ պատժի սպառնալիքի* մեկ ցուցիչ, ապա չափորոշիչը դրական է: Ցանկացած աշխատող երեխա, ում պարագայում չափորոշիչներից որևէ մեկը՝ «*հարկադրաբար և խաբեությամբ (ոչ ազատ կամարտահայտմամբ) հավաքագրումը*» կամ «*ճնշման տակ աշխատանք կատարելը կամ նվաստացնող (ստորացուցիչ) կենսապայմաններում ապրելը*» կամ «*գործատուին փոխելու /աշխատանքից ազատվելու անհնարինությունը*» դրական է, կարող է դիտվել որպես ենթադրյալ հարկադիր աշխատանքի զոհ: Բացի այդ, ցանկացած աշխատող երեխա, ով աշխատում է իր ծնողի կամ խնամակալի հետ կամ իր ծնողի կամ խնամակալի համար, ովքեր անձամբ ներգրավված են հարկադիր աշխատանքի մեջ, կարող է համարվել ենթադրյալ հարկադիր աշխատանքի զոհ**: